

## Առարկայական ներհյուսումը տարրական դասարաններում

*Անուշ Եղոյան  
Գոհար Լորտիկյան*

***Հանգուցային բառեր.** առարկայական ներհյուսում, նոր չափորոշիչ, ուսուցման գործնական ուղղվածություն, գիտելիքների իմաստավորված յուրացում, ներհյուս(ված) կրթություն, ներհյուս(ված) ուսուցման կադապար, կրթության վերջնարդյունք, առնչակից առարկաներ*

### Նախաբան

Հանրակրթության ոլորտում նոր չափորոշիչների ներդրման և փորձարկման հետ կապված կրթության արդիականացման գործընթացը հատկապես վերջին մեկ-երկու տարիներին նորովի դրսևորումներ է ստանում: Ձևավորվում է կրթության վերջնարդյունքների, գիտելիքների ու կարողությունների գնահատման նոր համակարգ: Վերջերս հասարակության մեջ հանրակրթության բնագավառում կուտակված հիմնահարցերը սկսել են նորովի ձևակերպվել, ու հատկապես վերջին տասնամյակում ուսուցիչներն ու ծնողները միաբերան պնդում են, որ նվազել է ուսման նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը:

Ուսումնական գործունեության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունների և ձգտումների մակարդակի անկումն ունի բազմաթիվ և տարաբնույթ պատճառներ, հիմնավորումներ, որոնք պայմանավորված են ամենաբազմազան գործոններով: Կրտսեր դպրոցականների պարագայում հանրային, տնտեսական, իրավական և այլ կարգի համընդհանուր պատճառներ գոյություն չունեն: Այս խնդրի լուծման որոնման ճանապարհին շատ է խոսվում դասագրքերի փոփոխության, սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջների վերանայման և առհասարակ առարկայական ծրագրերի բեռնաթափման մասին:

Մեր դիտարկմամբ կրտսեր դպրոցական տարիքում սովորելու նկատմամբ հետաքրքրության նվազումը առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրակրթական դպրոցում դասի ընթացքը դադարել է երեխաներին հրապուրող լինելուց: Նոր ժամանակների առանձնահատկություններից մեկն այն է, որ մարդը հայտնվել է տեղեկատվական հեղեղում, որի հորձանքներին դիմակայելը դարձել է կենսական խնդիր: Ցավոք, զվարճալի ու տարաբնույթ համակարգչային խաղերը

երեխայի կյանքում այսօր ավելի կարևոր նշանակություն ունեն, քան գիրք կարդալու, ընթերցասեր լինելու պահանջմունքը: Առաջին հայացքից մեզ՝ մեծահասակներին ու հատկապես մանկավարժներին համար մի տեսակ տարօրինակ է դիտարկել այն փաստը, որ այսօր երեխայի համար անհրաժեշտություն է դարձել համակարգչային ու տեղեկատվական տեխնոլոգիաներով նոր գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհը: Մենք երբեմն դժվարանում ենք հասկանալ այն իրողությունը, որ կյանքի հետ քիչ կապ ունեցող, երբեմն անհետաքրքիր ու դասագրքերում տեղ գտած ոչ այնքան պիտանի տեղեկությո՞ւր պարզապես ժամանակի ավելորդ վատնում է: Ուսուցիչները հաճախ չեն գիտակցում ու ընդունում այն հանգամանքը, որ երբ աշակերտը սովորում է հարկադրված, բռնանալով իր հետաքրքրությունների ու հակումների վրա, սովորում է հանուն ուսուցչի, հանուն լավ սովորողի իր համբավի պահպանման, ստացած գիտելիքները նրան ոչինչ չեն տալիս: Պարտադրաբար յուրացված գիտելիքը չի ներքնայնացվում, չի իմաստավորվում ու մնում է մարդու հիշողության մեջ որպես անպետք տեղեկությ [3, 9]:

Իսկ եթե չկա հետաքրքրություն, չկա նաև կայուն ուսումնական շահադրո՞ւմ, որը հիմնարար գիտելիք ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է: Եվ, քանի որ փորձարկվող նոր չափորոշիչներով դպրոցի համար կարևորագույն խնդիր է դարձել աշակերտի մեջ նրա շարունակական կրթության հնարավորությունն ապահովող անձնային և ինտելեկտուալ որակներ ձևավորելը, ուստի, իբրև ասվածի ապացույց, կարծես թե աննկատ վերափոխվում է կրթվածության երբեմնի ըմբռնումը: Կրթված մարդն այլևս նա չէ, ով ինչ-որ բան գիտի կամ գիտեցածը կարող է կիրառել իրականության մի նեղ ոլորտում, այլ նա, ով ընդունակ է ինչ-որ բան իմանալու: Այսինքն՝ գնահատվում է ոչ այնքան ուսյալությունը, որքան ուսանելիությունը՝ մարդու սովորելու, արտասովոր իրավիճակներից գլուխ հանելու, նրանցում արդյունավետ գործելու ունակությունը [3, 3]:

Ուստի կրթության բովանդակության արդիականացման նորարարական ծրագրերի մեջ դիտարկվում է ուսուցման գործնական ուղղվածության տարրերի ներմուծումը: Դեպի գործնական կողմնորոշվածություն ունեցող ուսուցումը նպատակ ունի, գիտելիքները կապելով փորձերի ու կյանքի հետ, դրանք առավել հետաքրքիր դարձնել: Նման պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, ասել է թե՛՝ ապահովվում է **գիտելիքների իմաստավորված յուրացում**: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը շահադրդիչ հզոր գործոն է դառնում: Այս համատեքստում շատ

է կարևորվում տարրական դասարաններում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը: Դրանց շարքում հատկապես ուշագրավ է ներհյուսված ուսուցման տեխնոլոգիան:

### **Ներհյուսված ուսուցման բնույթն ու առանձնահատկությունները**

Ներհյուսված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ [9]:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ներհյուսումը սովորողի համար որևէ մասնավոր երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու միջոցով [2, 143]:

Թեև նախորդ շրջանի կրթակարգից պահպանված ուսումնական ծրագրերում հանդիպում ենք միջառարկայական կապեր ապահովելու անհրաժեշտության շեշտադրման, սակայն դա կարծես մի տեսակ ոչ պարտադիր, երբեմն ոչ այնքան խորությամբ, զուտ ձևական կողմն ապահովող դրվագային անդրադարձ է այդ պահին դիտարկվող որևէ առարկայի կամ երևույթի ուսուցման ժամանակ: Գործող առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով հանձնարարելի ուսումնական նյութերով դասավանդվող կրթության բովանդակությունը մեծ հաշվով փաստացի բաշխվում է առանձին ուսումնական առարկաների վրա:

Ուսումնական տարբեր առարկաներից մի տեսակ անջատ-անջատ տեղեկությունների հաղորդումը չի նպաստում աշխարհի մասին երեխաների՝ նոր-նոր ձևավորվող աշխարհընկալմանն ու կյանքի՝ լիարժեք ու իրական պատկերացումների ձևավորմանը: Ուստի կրթության բարեփոխման արդի փուլում նոր կրթական չափորոշչային պահանջների ձևակերպման անհրաժեշտությունից ելնելով՝ ուսումնական գործընթացի մեջ հաջողության հասնելու կարևոր նախապայման է դարձել առարկայական տարրերի ներհյուսմամբ ուսումնական առարկաները տարրալուծելու և կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններից բխող իրական կյանքի մասին ամբողջական պատկերացումներ ստեղծելու այսօրվա հրամայականը:

Այստեղ կարևոր է հիշել, որ տարրական դպրոցը պետք է լինի ուրախության դպրոց, ինչպես դասական մանկավարժներն էին անվանում: Եվ պետք չէ սովորողին զրկել «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտու-

թյուն», «Տիզկուլտուրա» առարկաների ուսումնասիրությունից, այլ պետք է կրթությունը դարձնել հետաքրքիր և այն հազեցնել փոխլրացման տարրերով: Գ. Ղույումյանի բնորոշմամբ «...այն ուսուցիչներն ու ծնողները, ովքեր կիսեն երեխայից երգեցողությունը, խաղը, նկարելը, աշխատանքը՝ իրենց փառասիրությանը զոհաբերելով երեխայի առողջությունը, հրեշավոր հանցագործություն կկատարեն մանկության հանդեպ» [5, 155]:

Տարրական դասարանների տարբեր առարկայական ծրագրերով առնչակից թեմաներն ու հարցերը լայն հնարավորություն են տալիս օգտվելու ներհյուսման բաղադրիչից:

Մայրենի լեզվի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքների ներհյուսման բազմաթիվ դրվագներ: Այդ ներհյուսումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական ու միջառարկայական կապերի, այնպես էլ վերառարկայական դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել [2, 143-144]:

Ուսումնական գործընթացում ներհյուսման բաղադրիչի կիրառումը՝ որպես զարգացնող ուսուցման բաղադրիչ, նպաստում է աշակերտների մեջ այնպիսի կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են լսել դիմացինի խոսքը, արձագանքել, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ իրազեկության պաշար հավաքել, բանավիճել՝ նոր փաստարկներ և հիմնավորումներ ներկայացնելով, հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը, կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը, տեքստի բովանդակության և սեփական կենսափորձի միջև կապերը, տեղեկատվական աղբյուրներից գտնել անհրաժեշտ նյութեր, պատրաստել հաղորդումներ, էլոյթներ: Այս ամենը ապահովվում է տարրական դպրոցում ուսումնասիրվող բոլոր ուսումնական առարկաների առարկայական ծրագրերով, որն էլ նպաստում է առարկայական և կրթական չափորոշիչների պահանջների իրականացմանը: Այստեղ ներհյուսման բաղադրիչը պարզապես պետք է խթան հանդիսանա ուսուցչի համար, որպեսզի վերջինս բովանդակալից դաս կազմակերպի աշակերտների համար, ինչն էլ իր հերթին կբարձրացնի նրանց ուսումնական շահադրդվածությունը:

## **Առարկայական միասնացման և ներհյուսման մեր փորձից**

Այժմ ներկայցնենք մայրենի լեզվիի դասաժամերին մի քանի ուսումնական առարկաների համադրմամբ բարձր արդյունավետություն ապահովող ներհյուս ուսուցման մեր փորձը:

Իհարկե, մեր մտադրությունը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է վերանայել դասաժամի հատուկ գաղափարը տարրական դասարաններում: Այն պետք է լինի որոշակի ժամանակահատված (տվյալ օրվա դասացուցակով սահմանված), որի մեջ ներգրավված կլինեն կրտսեր դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաները, որոնք միահյուսված կլինեն «Մայրենի» և «Մաթեմատիկա» հենքային հավարվող առարկաների շուրջ: Սովորողն իրեն դասարանում պետք է ազատ զգա, որի պայմաններում էլ կկարողանա ազատ մտածել, իսկ ժամանակակից կրթության նպատակը, ինչպես հայտնի է, ազատամիտ և գրագետ քաղաքացի ձևավորելն է:

Այդ ամենը կապահովի ներհյուսման բաղադրիչը, որը կնպաստի սովորողի և՛ գեղագիտական, և՛ աշխատանքային դաստիարակության զարգացմանը: Նման դասերը հնարավորություն են տալիս ստեղծելու այնպիսի մթնոլորտ, որտեղ երեխաները կարող են իրենց երևակայությանն ազատություն տալ, լինել 21-րդ դարին համապատասխան՝ անկաշկանդ և նպատակասլաց: Այստեղ գործն ավելի է հեշտանում, քանի որ կրտսեր դպրոցում «Արվեստ» և «Ֆիզկուլտուրա» առարկաները ևս դասվարն է դասավանդում: Հենց թեմատիկ պլանը կազմելիս կարելի է ձկուն պլանավորել այն և մշտապես ապահովել որոշ ուսումնական առարկաների ներհյուսումը մայրենիի ընթերցանության դասին: Այս ամենը հնարավորություն կտա նաև դասի համար նախատեսված մարզադարձները ճիշտ օգտագործելու, որի շնորհիվ էլ կկարողանանք առաջնբեմ մղել երեխաների հետաքրքրություններն ու նախասիրությունները՝ բարձրացնելով ուսուցման արդյունավետությունը:

Առաջին դասարանում «Այբբենարան»-ի (հեղինակ Վ. Սարգսյան) «Քաղաքում» թեման ուսումնասիրելիս երեխաները սովորում են երթևեկության կանոնները, իսկ դա, ինչպես հայտնի է, այնքան էլ դյուրին գործ չէ, քանի որ այդ տարիքի երեխաների մեջ հակազդեցությունն ուշ է գործում. նրանք չեն կարողանում արագ կողմնորոշվել և փողոցը ճիշտ ժամանակին անցնել: Իսկ եթե մենք դասն անցկացնենք ներհյուսված՝ ներառելով ֆիզկուլտուրան, ապա դասին կսովորեցնենք նաև Ազդալույսի խաղը: Մինչ այդ կարելի է երեխաներին սովորեցնել փոքրիկ ոտանավոր

ազդալույսի մասին, ինչպես նաև առաջարկել գուշակել հանելուկի պատասխանը (նկ. 1).

**Հանելուկ**

*Ունեմ շորեր գույնզգույն,  
Պայծառատես երեք գույն,  
Իմ գույները թերթ առ թերթ  
եմ բերում,  
Բայց ամեն գույն փոխելիս  
Ճանապարհն եմ ցույց  
տալիս:  
(Ազդալույս)*

**Խաղ**

*Կարմիր լույս է՝  
կանգնի թ, (նստել)  
Դեղին լույս է՝ սպասի թ,  
(ծափ)  
Իսկ երբ լույսը կանաչ է,  
(քայլ)  
Փողոցն իսկույն անցի թ:*

**Խաղի ընթացքը:** Երբ ուսուցիչն ասում է՝ կարմիր, աշակերտները մնում են նստած, երբ ասում է՝ դեղին, կանգնում են ու ծափ զարկում, իսկ երբ ասում է՝ կանաչ, քայլում են: Սա լիցքաթափող վարժություն է և թերևս ցնցում է երեխաների հոգնածությունը:

Ներհյուս դասի ժամանակ կիրառելով վերը նշված խաղը՝ սովորողների շրջանում աշխուժություն է առաջանում, և փոքրիկների ոգևորությունը մեծանում է հատկապես, երբ նրանց փողոց ենք դուրս բերում: Ապա երեխաներին առաջարկում ենք իրենց առջև ծառացած դժվարությունը քայլ առ քայլ հաղթահարել: Սրա շնորհիվ վեց տարեկան փոքրիկներն այդ դասից սովորում են իրենց համար կյանքում կենսական նշանակություն ունեցող բան՝ ինչպես ճիշտ անցնել փողոցը:

Մայրենիի դասին պարտադիր պետք է կիրառվի մարզադադար, որը ժամանակատար է, իսկ եթե ֆիզկուլտուրայի դասաժամը համեմվի մայրենիով, ապա ժամանակի խնդիր չի առաջանա: Մարզադադարի բացակայության դեպքում երեխաները հոգնում են: «Ե՛վ անշարժությունը, և՛ շարժումների սակավությունը էապես վտանգում են ներքին օրգանների զարգացումն ու իջեցնում երեխայի աշխատունակությունը» [5, 144]:

Սովորողների շահադրդումն ավելի է մեծանում ներհյուսված ուսուցման ժամանակ, քանի որ նրանց աշխատունակությունը չի նվազում, և երեխաները չեն հոգնում: Եթե արթուն է երեխայի ուղեղը, ապա նա և՛ լսում է, և՛ ընկալում, որն ավելի է մեծացնում գիտելիքների ձեռքբերման մակարդակը: Օրինակ՝ «Ենթակա և ստորոգյալ» թեման ուսումնասիրելիս կարելի է խաղալ «Օդապարիկ» կամ «Խորտակվող նավ» խաղերը, որոնք կամրապնդեն և՛ երեխայի գիտելիքները, և՛ կթուլացնեն նրա հոգնածությունը: Իսկ եթե առարկայական ներհյուսում չապահովենք, զբաղվենք

միայն մայրենիի ընթերցանությամբ՝ նշելով, որ չենք տեղավորվում 45 բույս տնտղությամբ ակադեմիական դասի մեջ, ապա կիջեցնենք ուսուցման արդյունավետությունը: Մինչդեռ ֆիզկուլտուրային հասկացված 2 դասաժամը շարաթվա բոլոր օրերի վրա տարրալուծելով՝ կբարձրացնենք և՛ ուսուցման որակը, և՛ երեխաների շահադրդումը:

### **Միջառարկայական կապերը և ներհյուս ուսուցումը**

Ստորև ներկայացնենք այն միջառարկայական կապերը, որոնք նպաստում են ներհյուսված ուսուցման բաղադրիչի կիրառմանը մայրենիի ընթերցանության դասին:

«Մայրենի 3» դասագրքից (հեղինակ Դ. Գյուրջիյան, Ն. Հեքեքյան) «Աղվեսն ու վագրը» առակն անցնելիս՝ 2-րդ դասաժամին առակը պատմելիս, կարելի է բեմադրել տիկնիկային ներկայացում, որի համար անհրաժեշտ է «Տեխնոլոգիա 3» առարկայի «Ապրանք և ծառայություն» թեման անցնելիս սովորողների ու նրանց ծնողների համատեղ ջանքերով պատրաստել բեմահարթակ, իսկ «Կերպարվեստի» դասաժամին՝ «Մեր բարեկամ կենդանիները» թեման ուսումնասիրելիս, անհրաժեշտ է նկարել աղվես, վագր և այլ վայրի կենդանիներ, որոնք էլ կդառնան բեմական կերպարներ: Երեխան կհասկանա, որ տիկնիկային ներկայացման կազմակերպումը մատուցվող ծառայություն է, հետևաբար տիկնիկային բեմականացմամբ աշակերտները ծառայություն են մատուցում իրենց հասակակիցներին, իսկ մայրենի լեզվի զվարճալի դասը նրանց հիշողության մեջ կմնա որպես հաճելի դաս:

Ներհյուսված դաս կարելի է կազմակերպել նաև «Մայրիկիս տունը» բանաստեղծության ուսուցման ժամանակ՝ ներհյուսելով տեխնոլոգիայի, կերպարվեստի, երաժշտության առարկաները: Աշակերտները դասարանային պայմաններում կարող են ուսումնասիրել բանաստեղծությունը, թեման ուսումնասիրելիս պատրաստել գարնանային բացիկներ, իսկ «Մննդամթերքի նշանակությունը մարդու կյանքում: Մննդամթերքին ներկայացվող ընդհանուր պահանջերը» թեման ուսումնասիրել համապատասխան միջոցառման կարգով՝ մայրիկների համար ձևավորելով տոնական թխվածքաբլիթներ:

## **Եզրակացություն**

Այսպիսով՝ կրտսեր դպրոցում ներհյուսված ուսուցման մոտեցումը կիրառելով՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ է դառնում, մանավանդ երբ սովորողները որևէ թեմա ուսումնասիրում են տարբեր տեսանկյուններից: Նման գործելակերպը նպաստում է աշակերտների խոր և կայուն գիտելիքների ձեռքբերմանը, որի շնորհիվ նրանք հասկանում և կիրառում են յուրացված գիտելիքները: Ներհյուսված ուսուցման ժամանակ մեծանում է երեխաների շահադրվածությունը, քանի որ նման ուսուցման դեպքում նրանք արագ չեն հոգնում, և նրանց աշխատունակությունը տևական ժամանակ չի նվազում:

Ներհյուս ուսուցումը, չնույնանալով միջառարկայական կապի հետ, այնուամենայնիվ, անբաժան է նրանից: Կարելի է ասել, որ ներհյուսումը ենթադրում է բուն ներհյուս ուսուցման և միաջառարկայության ներհյուսում:

## **Գրականություն**

1. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Երևան, 2020:
2. Եդոյան Ա., Գևորգյան Վ., Մայրենիի միասնացված դասերին քերականական նյութի և որոշ առարկաների ինտեգրումը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց // ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Վանաձոր, 2019, էջ 142-154:
3. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2021:
4. Հովսեփյան Ս., Տեխնոլոգիա 3. Դասագիրք, Երևան, 2020:
5. Ղույումյան Գ., Մանկավարժություն, Գիրք I, «Զանգակ», Երևան, 2005:
6. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա., Երաժշտություն 3. Դասագիրք, Երևան, 2020:
7. Ներսիսյան Լ., Ներսիսյան Ս., Կերպարվեստ 3. Դասագիրք, Երևան, 2020:
8. Սարգսյան Վ., Այբբենարան, Երևան, 2010:



## Межпредметное сочетание в начальных классах

*Ануш Едоян  
Гоар Лортикян*

### Резюме

**Ключевые слова:** *межпредметное сочетание, новый стандарт, практическое направление обучения, полноценное приобретение знаний, комплексное обучение, комплексный шаблон обучения, конечный результат обучения, похожие предметы*

В начальных классах, при использовании комплексного подхода к обучению, образовательный процесс становится более эффективным, особенно когда учащиеся изучают тему с разных точек зрения. Эта практика способствует усвоению глубоких и устойчивых знаний, в результате чего, дети понимают и используют полученные знания. Интегрированное обучение повышает мотивацию учащихся, поскольку при таком обучении работоспособность учащихся не снижается со временем и они не устают во время урока.

## Interweaving of Subjects in Primary Grades

*Anush Yedoyan  
Gohar Lortikyan*

### Summary

**Key words:** *subject interweaving, new standard, practical approaches of teaching, meaningful acquisition of knowledge, comprehensive teaching, comprehensive template of teaching, final educational result, similar subjects*

In primary grades, when using an integrated approach to teaching, the educational process becomes more effective, especially when students study the topic from different points of view. This practice promotes the assimilation of deep and lasting knowledge, as a result of which, children understand and use the knowledge gained. Integrated learning increases the motivation of students, as with such training, students' performance does not decrease over time and they do not get tired during the lesson.

Ներկայացվել է 26.09.2021 թ.

Գրախոսվել է 04.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.